ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

ԹԱՌՈՅԱՆ Կ. Զ.

XIX դարի 60-ական թվականներին Թուրքիայում սկիզբ է առնում այսպես կոչված սահմանադրական շարժում: Պետական կառուցվածքի տեսակետից սուլթանական Թուրքիան շարժման կողմնակիցներին ներկայանում էր որպես անկարգ, կեղեքումների ու հափշտակությունների երկիր: Դրանից օգտվելով, ինչպես կարծում էին նրանք, նվաճված և ստրկացված ազգերից ոմանք արդեն ձեռք են բերել ազատություն ու անկախություն, ոմանք էլ կանգնած են ազատության դրոշ պարզելու ուղու վրա և ակնկալում են իրենց մոտալուտ անկախությունը, եթե դրությունը նույնությամբ շարունակվի: Ուստի, ըստ նրանց, Թուրքիան բարեփոխելու և նրա հզորությունը վերականգնելու համար հարկավոր էին արմատական վերափոխումներ: Սուլթանի իշխանությունը սահմանափակելու, սահմանադրություն ընդունելու, երկիրը սահմանադրական միապետություն դարձնելու խնդիրը դարձել էր թուրք սահմանադրականների մտահոգության առարկան:

1865 թ. հունիսի 6-ին Սահիր Ահմեդ բեյի ամառանոցում տեղի է ունենում հինգ երիտասարդ անձանց հանդիպում, ուր քննարկման է դրվում գաղտնի միություն հիմնելու հարցը: Երկու օր հետո գումարված ընդլայնված ժողովի որոշմամբ ձևավորվում է «Նոր օսմանների ընկերություն» անունով միությունը, որը կազմակերպական ձև ու գաղափարական բովանդակություն է հաղորդում սահմանադրական շարժմանը: Ընկերության ղեկավարներ են դառնում բանաստեղծ Ահմեդ Նամըք Քեմալը, հրապարակախոս Աբդուլ Զիյա բեյը և գրականագետ Ալի Սուավի էֆենդին:

«Նոր օսմանների» առաջին և գլխավոր խնդիրն է դառնում օսմանյան պետության վերակազմումն այն ձևով, որ դրանում բնակվող ժողովուրդները ժամանակի ընթացքում ձուլվեն, միանան և առաջացնեն մի ընդհանուր զանգված՝ օսմանցիներ, ընդհանուր հայրենիքի՝ Թուրքիայի բարօրության ու բարգավաճման համար աշխատող հպատակներ: Դրան հասնելու դյուրին միջոցներ էին համարվում այլազգիների ինքնության արմատների ոչնչացումը, բռնի կրոնափոխությունը, մասնակի և զանգվածային կոտորածները:

Հայտնի է, որ 1876 թ. իրենց ստեղծած սահմանադրությունն ընդունել տալու փոխհամաձայնությամբ «Նոր օսմանները» գահ բարձրացրին Աբդուլ Համիդ II-ին: Սակայն վերջինս, ամրապնդելով իր դիրքերը, կարճ ժամանակից հետո չեղյալ հայտարարեց սահմանադրությունը, ցրեց խորհրդարանը և երկրում վերականգնեց միանձնյա բռնակալական վարչակարգը: Դա խորացնում է «Նոր օսմանների» և սուլթանի հակասությունները: Վերջինս շատ ընդդիմադիրների բանտ է նետում կամ աքսորում, մյուսները հեռանում են երկրից և ապաստանում Եվրոպայում, հիմնականում՝ Ֆրանսիայում: Եվրոպայում նրանք ստանում են «Երիտասարդ

թուրքեր» անվանումը և այդպես էլ կոչվում հետագայում: Երիտթուրքերը Եվրոպայում հիմնում են իրենց հրատարակչությունները և լույս ընծայում թերթեր ու ամսագրեր, որոնցում աշխատում էին թուրք մտավորականությանը և ուսանող երիտասարդությանը համոզել, որ աջակցեն իրենց՝ վերականգնելու 1876 թ. սահմանադրությունը, քննադատում էին Աբդուլ Համիդի վարչակարգը և երկրի իրավիճակը: Նրանք բոլոր դժբախտությունների և կայսրության մեջ ծավալվող ժողովրդական շարժումների պատճառը համարում էին համիդյան վարչակարգը: Նպատակը պարզ էր՝ գահընկեց անել Աբդուլ Համիդին և սուլթան դարձնել մեկ ուրիշի, պահպանել Թուրքիայում գոյություն ունեցող տնտեսական, քաղաքական և կրոնական հաստատություններն ու հարաբերությունները, կենսագործել օսմանականության գաղափարները, պաշտպանել Ալժիրի, Թունիսի, Կովկասի, անդրկասպյան երկրների ու Հնդկաստանի մահմեդականների հետադիմական շարժումները և հասնել նրան, որ ամբողջ մահմեդական աշխարհը համախմբվի Թուրքիայի շուրջ: Թուրքիայում բնակվող մյուս ազգերի ու ժողովուրդների միասնության վերաբերյալ նրանց կոչերը ծայրահեղ կենտրոնացման և կառավարական վարչակարգի սաստկացման նպատակ էին հետապնդում:

Երիտթուրքերը թշնամաբար էին տրամադրված հատկապես հայերի և նրանց ազատագրական ձգտումների նկատմամբ: Չնայած դրան՝ երիտթուրքերը հայերին հորդորում էին միանալ իրենց՝ սուլթանական բռնապետության դեմ պայքարում: Այդ միտքը որոշակիորեն արտահայտվել է երիտթուրքական առաջին թռուցիկներից մեկում, որը տպագրվել է 1894 թ.՝ հայկական կոտորածների կապակցությամբ: Թռուցիկի հեղինակները հանդես են գալիս արևմտահայերի ինքնության ու հակակառավարական գործողությունների դեմ և առաջարկում են հրաժարվել դրանցից ու միանալ «օսմանների» պայքարին՝ հանուն ընդհանուր հայրենիքի: Սա ցույց է տալիս, որ երիտթուրքերը չէին ընդունում հայերի պահանջների օրինականությունը, չէին ուզում հասկանալ, որ նրանք Թուրքիայում տառապում են ոչ միայն պետական ծանր հարկերից ու տնտեսական ճնշումից, այլև իբրև «գյավուրներ» մատնված են ոճրագործ կառավարության քմահաճույքին, ֆիզիկական բնաջնջման վտանգին: Իսկ ինչ վերաբերում է Աբդուլ Համիդի դեմ երիտթուրքերի պայքարին, ապա դա խիստ անհետևողական էր ու շահադիտական, որը սուլթանին հնարավորություն էր տալիս կաշառքով և պետական բարձր պաշտոններ տալու խոստումով նրանց շատ առաջնորդների թեքել իր կողմը: Այդ ժամանակ արդեն երիտթուրք լինելը մասամբ դիտվում էր որպես շահ ստանալու և անձնական հաշիվներ մաքրելու միջոց: Երիտթուրքերի հակահայկական վարքագիծը ցայտուն դրսևորվում է նաև Սաբահէդդին և Լութֆուլլա փաշաների նախաձեռնությամբ 1902 թ. փետրվարի սկզբներին Փարիզում գումարված առաջին կոնգրեսում, որին մասնակցելու համար հրավերներ էին ուղարկվել վերակազմյալ հնչակյան կուսակցությանը, դաշնակցության կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակի» խմբագրությանը, «Հնչակ» թերթի խմբագրությանը, ինչպես նաև փարիզաբնակ մի քանի հայերի: «Հնչակի» խմբագրությունը հրավերին չէր պատասխանել: «Դրոշակի» խմբագրությունը և վերակազմյալ հնչակյան կուսակցության կենտրոնական

վարչությունը երեքական պատգամավոր էին ուղարկել: Կոնգրես էին եկել նաև Մ. Չերազը և Կ. Բասմաջյանը[1]:

Վերակազմյալ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության ու «Դրոշակի» ներկայացուցիչները կոնգրեսի բացումից առաջ հավաքվում են խորհրդակցության և որոշում հանդես գալ միասնաբար: Բացի այդ, նրանք նախնական տեսակցություն են ունենում Սաբահէդդին ու Լութֆուլլա փաշաների և Իսմայիլ Քեմալ բեյի հետ, որից հետո միայն համաձայնում են պաշտոնապես մասնակցել կոնգրեսին:

Դրանում քննարկման է դրվում մի նախագիծ, որով պահանջվում էր մերժել ամեն տեսակի համաձայնություն օսմանյան ժողովուրդների ու տիրապետող վարչակարգի միջև: Միաժամանակ ընդգծվում էր, որ կայսրությունում բնակվող բոլոր ժողովուրդների ու ցեղերի միջև պետք է հաստատել այնպիսի հարաբերություն, որը հնարավորություն կտա «լիակատար վայելելու» իրենց իրավունքները, օսմանյան գահի և օսմանյան դինաստիայի նկատմամբ նրանց ներշնչելու հավատարմություն և անձնվիրություն, բոլոր ջանքերը գործադրելու օսմանյան կայսրության ամբողջականությունն ու միասնությունը պահպանելու, երկրում օրինակելի կարգ ու խաղաղություն հաստատելու, պետության օրենքները հարգելու և պաշտպանելու, մասնավորապես՝ 1876 թ. սահմանադրությունը, որն ընդհանուր բարենորոգումների և օսմանյան ժողովուրդների քաղաքական ազատությունների ու իրավունքների լավագույն երաշխիքն է: Նախագծում նշվում էր, որ պետք է հարգել միջազգային համաձայնագրերը, հատկապես Բեռլինի դաշնագրի այն դրույթները, որոնք վերաբերում են Թուրքիային, և որոնք անպայման պետք է տարածվեն կայսրության բոլոր նահանգների վրա[2]:

Բանաձևի այս նախագծի դեմ հանդես են գալիս հայ պատգամավորները: Նրանք հայտարարում են, որ համաձայն չեն դրա շատ դրույթներին, մատնանշելով, որ արևմտահայության բաղձանքն է Թուրքիան տեսնել որպես դաշնակցային պետություն, այնինչ երիտթուրքերի որոշակի նպատակն է կայսրության մեջ բնակվող բոլոր ազգերին ձուլել, ամրապնդել թուրքական կենտրոնական իշխանությունը և վերականգնել նրա վաղեմի հզորությունը: Հայերը հատկապես բողոքում են բանաձևի նախագծի այն պահանջի դեմ, որ Բեռլինի դաշնագրի՝ Թուրքիային վերաբերող դրույթները պետք է տարածվեն կայսրության բոլոր նահանգների վրա: Հայ պատգամավորները մատնանշում են, որ 61-րդ հոդվածը հնարավոր չէ տարածել կայսրության մյուս նահանգների վրա, քանի որ այն նախատեսված է միայն հայկական նահանգների համար: Ինչ վերաբերում է մյուս նահանգների բարեփոխումներին, ապա դա «ազատական օսմանները» ոչ միայն պետք է անեն, այլև պարտավոր են անելու: Հայ պատգամավորները միաժամանակ հայտարարում են, որ իրենք չեն կարող ընդունել, թե իբր 1876 թ. սահմանադրությունն «ամենեն ապահով և ամենեն թանկագին երաշխիքն է» Թուրքիայում բնակվող բոլոր ազգերի ու ժողովուրդների

[1] Անահիտ, 1902, №2, էջ 38:
[2] Նույն տեղում, էջ 39:

քաղաքական ազատության և իրավունքների ապահովման համար՝ ընդդեմ կամայականության:

Կոնգրեսում հայ պատգամավորները հրապարակում են իրենց հայտարարությունը, որտեղ ասվում էր, որ «հայ կոմիտեները պատրաստ են» համագործակցել «ազատական օսմանների» հետ «արդի ռեժիմը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկվող ամեն տեսակի գործողություններում», և որ «հայ կոմիտեները» շարունակելու են իրենց «մասնավոր, անկախ աշխատանքները», որոնք ուղղվում են արդի վարչակարգի և ոչ թե Թուրքիայի դեմ: Այդ «մասնավոր աշխատանքներն ու գործողությունները այլ նպատակ չեն հետապնդում, բացի Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից, 1895 թ. մայիսի 11-ի հուշագրից և նրա հավելվածից»[3], ինչպես նաև «հայ կոմիտեների» կողմից Ֆրանսիայի կառավարությանը հանձնված հուշագրի մեջ առաջ քաշված պահանջների կատարումից: Այս հայտարարությունը հրապարակելուց հետո հայ պատգամավորները հեռանում են դահլիճից:

Թուրքիան ծանր ժամանակներ էր ապրում: Ներքին հետադիմությունը մոլեգնում էր բոլոր ուղղություններով, երկիրը եվրոպական մեծ տերությունների համար դարձել էր վաճառահանման շուկա և հումքային աղբյուր: Աշխատավորության կեղեքումը մեծ չափերի էր հասել: Նման պայմաններում երիտթուրքերի կուսակցության («Միություն և առաջադիմություն») ղեկավար կենտրոնը Փարիզից փոխադրվում է Սալոնիկ՝ կապ հաստատելով բանակում եղած իր կողմնակիցների հետ:

1907 թ. դեկտեմբերի 27-29-ը Փարիզում տեղի է ունենում սուլթանական վարչակարգին ընդդիմադիր կուսակցությունների նոր կոնգրես: Դրան մասնակցում էին «Իթթիհադ վե թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կոմիտեի, Հայ հեղափոխական դաշնակցության, «Օսմանյան միություն անհատական նախաձեռնության, ապակենտրոնացման և սահմանադրության» կոմիտեի, «Եգիպտական հրեական կոմիտեի», Լոնդոնում թուրքերեն և պարսկերեն հրատարակվող «Հիլաֆեթ» թերթի խմբագրության, Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթի խմբագրության, «Ռազմիկ», «Հայրենիք» (ԱՄՆ) թերթերի խմբագրությունների, Եգիպտոսի «Ահտի օսմանի» կոմիտեի, բուլղարական, ալբանական և արաբական ազգային խմբերի ներկայացուցիչները[4]:

Կոնգրես հրավիրելու համար կազմվել էր բյուրո, որի մեջ մտել էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի, «Օսմանյան միություն անհատական նախաձեռնության, ապակենտրոնացման և սահմանադրության» կոմիտեի և Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչները: Բյուրոն հրապարակում է հայտարարություն, որում քննադատվում էր Աբդուլ Համիդի վարած ներքին ու

[3] Նույն տեղում, էջ 40:

[4] Հնչակ, 1908, հունվար, № 1:

արտաքին քաղաքականությունը: Դրանում նաև նշվում էին այն նախապայմանները, որոնք պետք է ընդունեին կոնգրեսին մասնակցող կոմիտեները, կուսակցություններն ու ազգային խմբերը, ինչպես նաև թվարկվում էին քննարկվելիք հարցերը [5]:

Կոնգրեսը դատապարտում է Աբդուլ Համիդի բռնապետական վարչակարգը և կոչ անում տապալել այն: Սակայն ոչինչ չէր ասվում, թե օրենսդիր և գործադիր ինչպիսի հիմնարկներ ու մարմիններ էին ցանկանում ստեղծել երիտթուրքերը, և դրանք ինչո՞վ պիտի տարբերվեին եղածներից: Հենց դա էլ բավական էր, որ մակեդոնացիները, արաբները, հայերը և այլ ժողովուրդներ կոնգրեսին անվստահությամբ և կասկածանքով վերաբերվեին: Հայկական հարցի լուծման ուղղությամբ ոչ մի միջոցառում չէր նախատեսվում:

Կոնգրեսում որոշումներ են ընդունվում նաև մշտական գործող խառը կոմիտե ստեղծելու, հեղափոխական համերաշխության, ազատության համար զոհվածների հիշատակի, դավաճանների դեմ պայքարի, հեղափոխական գրականության հրատարակման, 1908 թ. դեկտեմբերի վերջերին նոր կոնգրես հրավիրելու մասին և այլն:

Բայց այդ, հայտարարությունը և որոշումները միայն միջոց էին քողարկելու երիտթուրքերի իսկական նպատակները, այն է՝ խեղդելու ինչպես ուրիշ ազգերի, այնպես էլ արևմտահայերի ազատագրական շարժումները, վերջ տալու Հայկական հարցին: Նրանց պահանջած խորհրդարանը, «ներկայացուցչական վարչակարգը» միջոց էին՝ քարոզելու թուրքական ազգայնականությունը և պաշտպանելու սուլթանական ազգահալած քաղաքականությունը՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ և սքողելու իրենց հետադիմական նպատակները:

Թուրքիայի քաղաքական մթնոլորտը գնալով շիկանում էր: Հենվելով բռնապետական ուժերի վրա՝ սուլթանը շարունակում էր իր կործանարար քաղաքականությունը՝ ժողովրդի մեջ առաջացնելով մոլեգին ատելություն իր նկատմամբ: Այդ պայմաններում երիտթուրքերը ակտիվացնում են իրենց աշխատանքը՝ տարածելով հակասուլթանական թռուցիկներ, կոչեր և այլն: Դրանցից մեկը, որն ուներ «Զարթնեցեք հանուն անմահ ու կենդանի ալլահի» վերնագիրը, թվարկում էր այն թշվառությունները, որ ժողովուրդը կրել էր ու կրում է սուլթան Աբդուլ Համիդից: Սպայությունից պահանջվում էր զսպել զինվորներին, երբ նրանց տանում են «ներքին թշնամիների» դեմ, ժողովրդին օգնել բռնապետության դեմ նրա դժվարին կռվում, աջակցել դժբախտ հայրենիքի արագ ու շուտափույթ վերանորոգությանը: Գյուղացիությանը հորդորվում էր՝ չվճարել հարկերն ու տուրքերը և այլն [6]:

Սուլթանական վարչակարգի դեմ պայքարն ավելի սուր էր եվրոպական Թուրքիայում՝ մասնավորապես Սալոնիկում տեղակայված բանակում, որտեղ զինվորների վիճակը շատ ծանր էր: Դրան ավելանում էր այն, որ նրանք ստիպված էին շարունակ կռվել բուլղարական, սերբական ու մակեդոնական ազատագրական

---

[5] Հայտագիր օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերու կոնգրեսի (գումարված Եվրոպային մեջ 27-29 դեկտեմբերի, 1907), Ժնև, 1907, էջ 3-11:

[6] Մշակ, 15. IX. 1907:

ջոկատների դեմ: Մակեդոնիան, փաստորեն, դարձել էր երիտթուրքերի կենտրոնատեղին: Մակեդոնական բանակի սպաները, որոնց սպառնում էր բանտ և աքսոր, որոշում են 1908 թ. հունիսի 28-ին ապստամբել սուլթան Աբդուլ Համիդի դեմ: Երիտթուրքական հեղափոխական առաջին ջոկատը լեյտենանտ Ահմեդ Նիյազի հրամանատարությամբ հուլիսի 3-ին դուրս է գալիս Սերեից և շարժվում Կոստանդնուպոլսի վրա: Նրան է հետևում հարյուրապետ Էնվեր բեյը: Բազմաթիվ վայրերում տեղի են ունենում զինվորական ելույթներ՝ կոչ անելով երկրում հաստատել սահմանադրական կարգեր: Սուլթանից պահանջվում էր անհապաղ վերականգնել 1876 թ. սահմանադրությունը: Մակեդոնական 30 հազարանոց բանակը հայտարարում է, որ անմիջապես կարշավի մայրաքաղաքի վրա, եթե սուլթանը երեք օրվա ընթացքում սահմանադրություն չհռչակի [7]:

Կ. Պոլսի վրա արշավող բանակի պահանջի հետ Աբդուլ Համիդը համակերպվում է: Նախարարների խորհրդի 1908 թ. հուլիսի 24-ի նիստում, ելնելով այն բանից, որ մայրաքաղաքի վրա շարժվող զորքին կանգնեցնել հնարավոր չէ[8], որոշվում է վերահաստատել սահմանադրությունը: Սուլթանը վավերացնում է այդ որոշումը: Նույն օրը մայրաքաղաքի թերթերը հրապարակում են սուլթանական իրադեն՝ սահմանադրությունը վերահաստատելու և խորհրդարան հրավիրելու մասին:

Թուրքիայում բնակվող ժողովուրդները ոգևորությամբ են ընդունում այդ լուրը: Բանտերից ազատվում են շատ քաղկալանավորներ: Եվրոպայում ապաստանած վտարանդիները վերադառնում են հայրենիք, անցկացվում են խորհրդարանական ընտրություններ: 1908 թ. հոկտեմբերի 17-ին բացվում է խորհրդարանը: Ընտրվել էր 275 մարդ [9]: Երիտթուրքերը գահի վրա են թողնում Աբդուլ Համիդին՝ բավարարվելով իրենց ոչ ձեռնտու մարդկանց զբաղեցրած պաշտոններից հեռացնելով կամ աքսորելով: Մեծ վեզիրի պաշտոնում նշանակվում է ծերունի Քյամիլ փաշան: «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը մնում է Սալոնիկի կենտրոնական վարչության ղեկավարության տակ: 1908 թ. սեպտեմբերին վարչությունը հրապարակում է իր քաղաքական ծրագիրը, որը համարյա կրկնում էր միդհատյան սահմանադրությունը [10]: Այնտեղ նշվում էր, որ սուլթանը ծայրագույն խալիֆն է և թուրքական բոլոր հպատակների տերը, նա ենթակա չէ պատասխանատվության և անձեռնմխելի է: Իսկ ինչ վերաբերում է հպատակներին, ապա նրանք առանց խտրության անվանվում են օսմանցիներ (օսմաններ): Երիտթուրքական «հեղափոխությունը», փաստորեն, թուրքական բուրժուազիայի և միապետության միջև դաշինք էր, որը երբեք էլ չէր նշանակում անցում արևելյան բռնապետությունից դեպի եվրոպական պառլամենտարիզմ, մի բան, որ այն ժամանակ չհասկացան հայ ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից շատերը:

---

[7] *История Второго интернационала, т. 2, М .,1966, с. 186.*

[8] *Архив внешней политики России, ф. Политархив, д. 3083 (1908г.).*

[9] **Մանտելշտամ Ա.,** Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, I մաս, Կ. Պոլիս, 1915, էջ 39:

[10] 1909: Ընդարձակ օրացույց, Կ. Պոլիս, 1909, էջ 227-243:

Չնայած թուրքական սահմանադրության կիսատպռատությանը, ժողովրդին քաղաքական ազատություններ չտալուն, սուլթանի համապարփակ իշխանությունը պահպանելուն, դրա հոդվածներից շատերի ձևական լինելուն՝ հին վարչակարգի կողմնակիցները լայն քարոզչական արշավանք են սկսում երիտթուրքերի դեմ՝ նրանց մեղադրելով իսլամին դեմ լինելու մեջ: Հին կարգի պաշտպաններից բացի, երիտթուրքերից դժգոհ էին նաև ուրիշները: Նոր կարգը չէր գոհացնում վերջիններիս, մանավանդ որ երիտթուրքերը, նվաճելով իշխանությունը, ձգտում էին ճնշել ազատ խոսքը և թշնամաբար էին նայում արմատական պահանջներ առաջադրող մարդկանց ու խմբերին: Բողոքի ու դժգոհության այդ արտահայտություններն օգտագործվում էին հին վարչակարգին հավատարիմների կողմից: Այս պայմաններում իսլամի ուսմունքը պաշտպանելու պատրվակով թուրքական ազդեցիկ շրջաններում կազմակերպվում է «Մուսուլմանական միություն» կոչվող խիստ հետադիմական կազմակերպությունը [11], որը սկսում է գործել «Իթթիհատ Մուհամեդի» անունով:

Այդ կազմակերպության ծրագրի առաջին հոդվածում նշվում էր, որ նրա նախագահը Մուհամեդ մարգարեն է, իսկ նպատակը՝ իսլամի անխախտ պահպանումը [12]: Երիտթուրքերի և սուլթանի կողմնակիցների միջև ամենուր տեղի էին ունենում արյունալի կռիվներ և աղմկոտ բանավեճեր: Սուլթանական ուժերին աջակցում էր Քյամիլ փաշան, որը հեղաշրջում կատարելու նպատակով մայրաքաղաքից հեռացնում է Սալոնիկի զինջոկատը, պաշտոններից զրկում «Միություն և առաջադիմություն» կազմակերպության անդամներից շատերին և այլն: Այս ձեռնարկումների դեմ բողոքում են երիտթուրքերը: Որպես բողոքի դրսևորում՝ ներքին գործերի և արդարադատության նախարարները հրաժարական են տալիս: Լարված վիճակը Քյամիլ փաշային ստիպում է 1909 թ. հունվարի 31-ին հրաժարվել պաշտոնից: Նոր մեծ վեզիր է նշանակվում Հյուսեյն Հելմի փաշան: 1909 թ. ապրիլի 13-ին 5000 զինվոր խռովություն է բարձրացնում՝ պահանջելով վերացնել սահմանադրությունը: 600 սոֆթաներ մեծ թվով հրոսակների գլուխ անցած հարձակվում են խորհրդարանի վրա, սպանում երիտթուրք մի քանի ղեկավարների ու պատգամավորների, ավերում են երիտթուրքական հրատարակչություններն ու թերթերի խմբագրությունները: Տապալվում է «նոր կարգը»: Երիտթուրք պատգամավորները և բարձրաստիճան պետական պաշտոնյաներն Ահմեդ Ռիզայի գլխավորությամբ հեռանում են Կոստանդնուպոլսից: Երիտթուրքերը զրկվում են իշխանությունից, վերացվում է սահմանադրությունը, վերականգնվում՝ հին կարգը: Ի պատասխան այդ ամենի՝ Սալոնիկի 40 հազարանոց բանակը, որի կազմում կային այլ ազգերի շատ ներկայացուցիչներ, շարժվում է Կոստանդնուպոլսի վրա: Սան-Ստեֆանոյում հրավիրվում է խորհրդարանի նիստ, որը որոշում է գահընկեց անել Աբդուլ Համիդին: Վերջինս կտրականապես ժխտում է խռովության և հեղաշրջման մեջ իր մասնակցությունը, իսկ հետո դիմում է ուրիշ պետությունների աջակցությանը: Դրա դիմաց նա

[11] Մշակ, 10. IV. 1909:

[12] Նույն տեղում:

Ավստրո-Հունգարիային խոստանում է զիջել Մակեդոնիան: Նման զիջումներ է խոստանում նաև Ռուսաստանին և Գերմանիային: Բացի այդ, զենք ու զինամթերք է բաժանում հանցագործ տարրերին՝ նրանց խրախուսելով սկսել հայերի և քրիստոնյա այլ ժողովուրդների ջարդ, նպատակ հետապնդելով հասնել եվրոպական պետությունների միջամտությանը: Սակայն Սալոնիկի բանակը Մահմուդ Շեվքեթ փաշայի հրամանատարությամբ 1909 թ. ապրիլի 24-ին մտնում է մայրաքաղաք: Կ. Պոլսի փողոցներում տեղի են ունենում կատաղի մարտեր, որոնք ավարտվում են սուլթանական պալատի գրավմամբ և Աբդուլ Համիդի գահընկեցությամբ: Սուլթան է հռչակվում նրա եղբայր Ահմեդ Ռեշադը: Աբդուլ Համիդը ձերբակալվում է և տարվում Սալոնիկ:

Տապալելով բռնապետական վարչակարգը և հաստատելով սահմանադրական կարգեր՝ երիտթուրքերն անուշադրության են մատնում կենսական նշանակություն ունեցող շատ հարցեր, առաջին հերթին՝ ազգային հարցը: Ռուս լրագրող Լ. Նեմունովը գրում է, որ բուլղարների, մանավանդ հայերի պահանջները երիտթուրքերը մատնում են անուշադրության: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ դոկտոր Ռիզա Թեֆիկ բեյը նրա հետ ունեցած զրույցի ժամանակ հայտարարել է. «Մեր հիմնական սկզբունքներն են կայսրության ամբողջականությունը և բոլոր քաղաքացիների հավասարությունը: Այդ պատճառով մենք չենք կարող թույլ տալ այնպիսի բան, որ վտանգավոր է պետության ամբողջականության համար կամ թե օսմանյան ժողովրդի մի մասին դնում է լավ կամ տարբեր պայմանների մեջ, քան թե մյուսներն ունեն: Հայերը չեն կարող ունենալ այնպիսի իրավունքներ կամ արտոնություններ, որպիսիք չունեն հույները, հրեաները, բուլղարները և այլն: Ուստի մենք պետք է պնդենք, որ վերացվեն պատրիարքության քաղաքական և իրավական արտոնությունները»[13]: Ռիզա Թեֆիկն օսմանյան ժողովուրդ ասելով հասկանում էր կայսրության մեջ բնակվող բոլոր ազգերը միասին վերցրած: Ըստ նրա, բոլոր դպրոցներում ուսուցումը պետք է իրականացվեր թուրքերենով, երեք-չորս տարվա ընթացքում պետք է ազգային դպրոցներն ու մշակութային-լուսավորական հաստատությունները վերացվեին, պետության մեջ գործող միակ լեզուն լիներ թուրքերենը:

Երիտթուրքերի շովինիստական քաղաքականությունը մերկացվում էր շատ երկրների առաջադիմական մամուլում: Այդ քաղաքականության դեմ իրենց ձայնն են բարձրացնում բուլղարական տեսնյակներն ու սերբական սոցիալ-դեմոկրատները, որոնք դիմում են ուղղում Երկրորդ ինտերնացիոնալի՝ Կոպենհագենի (1910 թ.) կոնգրեսին, նշելով, որ «իրենց հանցավոր գործողություններով երիտթուրքերը հաճախ գերազանցում են նախկին՝ Աբդուլ Համիդի վարչակարգին»[14]:

Այս հանգամանքը որոշակիորեն դրսևորվեց նաև Կիլիկիայում: Դրա արևմտյան մասն Ադանա քաղաքով 1890-ական թթ. զերծ էր մնացել հայկական ընդհանուր կոտորածներից: Երկրամասի բերրիությունը, ծովային առևտրի հնարավորությունները, այլ երկրների հետ առևտրական կապերը հայերին օգնել

---

[13] **Թերզյան Հ.**, Կիլիկիայի աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 53:

[14] *История Второго интернационала, т. 2, с. 187.*

էին ընդգրկվելու աշխույժ արտադրական ու առևտրական ձեռնարկումների մեջ և գրավել տնտեսական որոշակի դիրք:

Երբ Թուրքիայում հաստատվում են սահմանադրական կարգեր, և հայերը տարբեր եղանակներով արտահայտում են իրենց գոհունակությունը, թուրք իշխող խավերը, մասնավորապես հոգևորականությունն ու պաշտոնյաները, հայտարարում են, թե սահմանադրությունը հնարվել է հայերի համար, մահմեդականները դրանից ոչ մի շահ չունեն: Այդ օրերին, առանց որևէ հիմքի, Ադանայի կուսակալ Զեվադ բեյը հաղորդում է Կոստանդնուպոլիս, թե իբր հայերը Կիլիկիայում ապստամբելու և իրենց թագավորությունը հաստատելու միտք ունեն: Այս ստահոդ պնդումը շահավետ էր Աբդուլ Համիդի և երիտթուրքերի համար: Նրանք դաշնակցելով որոշում են կոտորել հայերին:

Ադանայի առաջին ջարդը տեղի է ունենում 1909 թ. ապրիլի 1-ին: 1908 թ. հուլիսի 10-ից մինչև ջարդի օրը Ադանայում և նրա շրջակայքում տեղի էին ունեցել մի շարք ոճրագործություններ, որոնց տեղական իշխանությունները կարևորություն չէին տվել: Դրանից քաջալերված՝ 1909 թ. մարտի 30-ին հրոսակները հարձակվում են քաղաքի հայաբնակ թաղերի վրա: Նրանց խրախուսում էր Զեվադ բեյը: Մարտի 31-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած միապետական հեղաշրջումն ավելի է ոգևորում ջարդարարներին: Նույն օրվա երեկոյան թուրք հրոսակները դիմում են տեղական իշխանությանը՝ պահանջելով աջակցել ջարդին: Ստանալով վերջինիս համաձայնությունը՝ նրանք հարձակվում են քաղաքային շուկայում առևտուր անող հայերի վրա ու կոտորում, կողոպտում և հրի են մատնում նրանց խանութները: Ապրիլի 1-ին ջարդարարները մեծ բազմությամբ գրոհում են քաղաքի հայերի վրա: Մոտ 173 զինված հայեր հերոսաբար պաշտպանում են անզեն հայ բնակչությանը: Ադանայի առաջին ինքնապաշտպանության ղեկավարներից էին Կարապետ Լաչինյանը և Տիգրան Պզտիկյանը [15]:

Թուրքական իշխանությունները հայերի դեմ զինում են թուրք և քուրդ հանցագործներին: Ջարդերին ակտիվորեն մասնակցում է զորքը: Հայերը հուսահատ քաջությամբ էին կռվում թշնամու դեմ: Անգլիական հյուպատոսի խորհրդով հայերն իրենց զենքը հանձնում են իշխանությանը, հուսալով, որ դա կհանգստացնի ջարդարարներին: Սակայն, օգտվելով դրանից, թուրք ջարդարարները սկսում են նոր կոտորածը: Հենց այդ ժամանակ Մերսին են ժամանում մեծ տերությունների ռազմանավերը, որոնք ականատես են լինում արյունալի սպանդին, բայց չեն միջամտում:

Ադանայի երկրորդ ջարդը սկսվում է ապրիլի 12-ին: Հայերի տները և ամբողջ ունեցվածքը մոխրակույտերի են վերածվում: Ջարդերի ժամանակ հայերին օգնում և 300 մարդու իր տանը ապաստան է տալիս ռուսական հյուպատոսարանի թարգմանչի մայրը: Քաղաքում և մերձակա գյուղերում կոտորվում է 16.627 մարդ: Հայերի նյութական կորուստները հասնում են ավելի քան 1.634.000 լիրայի [16]: Կոտորածից մազապուրծ հայերը մատնվում են անելանելի վիճակի:

Ջարդեր են կատարվում նաև Տարսոնում, Գյոզ օլուղում, Համիդիեում, Օսմանիեում, Հասանբեյլիում և այլուր: Ջարդերից զերծ են մնում Մերսինը,

---

[15] **Թերզյան Հ.,** նշվ. աշխ., էջ 53

[16] Նույն տեղում, էջ 157:

Սելեվկիան և Սիսը: Ինքնապաշտպանական կռիվներ են մղում Շեյխ-Մուրադի, Հաճնի, Չոք-Մարզվանի (Դյորթ-յոլ), Գարա-բազարի, Ջին-Թորոսի հայ բնակիչ-ները: Մոտ 8000 թուրք ջարդարարներ պաշարում են 5000 հայ բնակչություն ունեցող Հաճնը: Տեղի բնակիչները դիմում են կառավարությանը և խնդրում պաշտ-պանել իրենց: Այստեղ է ուղարկվում կանոնավոր բանակի մի ջոկատ, որը հայերին պաշտպանելու փոխարեն միանում է ջարդարարներին: Հայերը ստիպ-ված դիմում են զենքի և շուրջ 12 օր հերոսաբար դիմադրում թշնամուն: Այդ ծանր պահին զեյթունցիները հեռագրում են թուրքական կառավարությանը և հայտնում, որ եթե Հաճնի հայերը կոտորվեն, իրենք ոչ մի թուրք կենդանի չեն թողնի:

Հերոսական էր Չոք-Մարզվանի ինքնապաշտպանությունը: Մեծ թվով հրոսակներ կանոնավոր բանակի զինվորների հետ պաշարում են քաղաքը, ուր հավաքվել էր շուրջ 12 հազար հայ: Նրանք անձնուրաց մարտնչում են թշնամու դեմ: Ապրիլի 12-ին թուրք ջարդարարներն ամեն կողմից սկսում են գրոհը, բայց հանդիպելով հայերի հերոսական դիմադրությանը՝ կանգ են առնում: Հայերը ներկայացուցիչներ են ուղարկում օտարերկրյա հյուպատոսների մոտ՝ խնդրելով նրանց օգնությունը: Հենց այդ պահին այստեղ է բերվում կանոնավոր բանակի մի մեծ ջոկատ, և սկսվում են ձերբակալություններ: Հայերը հեռանում են լեռները և շարունակում պայքարը: Ինքնապաշտպանական կռիվներ են մղվում նաև այլ բնակավայրերում:

Կոստանդնուպոլսի հայոց ազգային ժողովի հատուկ հանձնախմբի հետա-քննության տվյալներով այս ջարդերի ժամանակ Կիլիկիայում զոհվում է ավելի քան 30.000 մարդ, անօգնական և թշվառ վիճակի է մատնվում 80.000-ից ավելի հայ[17]:

Կիլիկիայի հայերի զանգվածային կոտորածները կառավարության դեմ դժգոհության և բողոքի մեծ ալիք են առաջացնում: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և թուրքական խորհրդարանի հայ պատգամավորները հարցում են անում կառավարությանը և բացատրություն պահանջում: Այստեղ մերկացնող ելույթ-ներով հանդես են գալիս Վարդգես Սերենկյուլյանը, Գրիգոր Զոհրապը, Համբար-ձում Պոյաճյանը և ուրիշներ: Երիտթուրքերը, որոնք ջարդերի գլխավոր կազմակեր-պիչներն էին, անմեղ են ձևանում՝ ամեն ինչ բարդելով Համիդի ու նրա գործա-կալների վրա: Զինվորական հատուկ հանձնաժողով է ուղարկվում Ադանա, որը, ինչպես սպասվում էր, ամբողջ մեղքը բարդում է հայերի վրա և 6 անմեղ մարդու դատապարտում մահվան: Այդ բացարձակ անարդարության ու կեղծիքի դեմ բողոքում են արտասահմանյան երկրներում ապաստանած հայ փախստա-կանները: Նրանք դիմում են ռուսական կառավարությանը՝ համաձայնելով ընդունել ուղղափառություն և այդ միջոցով նրա կողմից պաշտպանություն գտնելով, վերադառնալ իրենց բնակավայրերը: Երիտթուրքերի բռնությունների և ջարդերի դեմ բողոքի ձայն են բարձրացնում շատ երկրների առաջադիմական ուժերը: Բայց դրանք արդյունք չեն տալիս: Երիտթուրքերը, ամրապնդելով իրենց դիրքերը, ձեռնամուխ են լինում իրականացնելու այն, ինչին չէր հասել Աբդուլ

[17] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 2, գ. 678, թ. 1-20; գ. 668, թ. 7:

Համիդը՝ կոտորել ողջ արևմտահայությանը և հայազրկել Արևմտյան Հայաստանը:

ИНТРИГИ МЛАДОТУРОК, НАПРАВЛЕННЫЕ ПРОТИВ ОСВОБОДИТЕЛЬНЫХ УСТРЕМЛЕНИЙ АРМЯН

ТАРОЯН К. З.

Резюме

Общественно-политическое течение младотурок, прошедшее определенные стадии развития под эгидой организации ,,Единство и прогресс”, спекулируя идеей борьбы против деспотического режима Абдула Гамида, стремилось увести западных армян от освободительной борьбы, а также ассимилировать их с турками, навязав им мусульманскую веру.

Эта экстремистско-шовинистическая человеконенавистническая идеология нашла отражение в постановлениях и воззваниях младотурецких конгрессов 1902 и 1907 годов, а также в массовой резне армян в Киликии (Адана) в 1909 г.